Ս.Դ.ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԿՈՐՊԱՉՈՎԻՆ

Պր. Միխայիլ Կորպաչով,
Սովետական Միութեան Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի Առաջին քարտուղար,

Քրեմլին, Մոսկուա

Յանուն միասնականութեան Խորհրդային Հայաստանի եւ արտասահմանի հայութեան, կոչ կ՚ընենք, որ արդար լուծում մը գտնուի Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզը Խորհրդային Հայաստանին վերամիացնելու հարցին, սրբագրելով պատմական անարդարութիւն մը:

Ձեր դրական լուծումը բերելով այս հարցին, գոհացում կը տրուի հայութեան պահանջներուն, ինչպէս նաեւ կ՚ամրապնդուի սովետական բոլոր ազգերու բարեկամութիւնը, Ձեր կողմէ գլխաւորուած վերակառուցման պատմական ժամանակաշրջանին:

Խորապէս հաւատացած ենք որ արդարութիւնը իր տեղը պիտի գտնէ Ձեր բերած լուծումով:

Ս.Դ.Հնչակեան Կուսացութեան
Կեդրոնական Վարչութիւն

Պէյրութ, 2/9/1988